

Թուրքիոյ անկախութիւնը գերազանցապէս վրտանգուած է Պորհրդային Միութեան կողմէ. իսկ անոր հողային ամբողջութիւնը վտանգուած է Եւրոպայէն, գլխաւորաբար Իտալիոյ եւ Անգլիոյ կողմէ :

Թուրքիա այս երկու վտանգներու մէջ տարուբերուելով, հակուած կը մնայ Ռուսաստանի կողմը եւ այնքան կը մօտիկնայ անոր, որ իր անկախութիւնը պահպանուի, ու միւս կողմէ, ժամանակաւորապէս ապահովուի իր հողային ամբողջութիւնը, որ բաժանման վրտանգին ենթակայ է : (Կ'արժէ յիշել Կարսի եւ Լօզանի խորհրդաժողովները) :

Թուրքիա կը գիտակցի, որ, եթէ միջագային բարդութիւնները իրեն չօգնեն, ինք անգոր է պաշտպանուելու վեր յիշուած երկու վտանգներու գէմ :

Թուրքիա կը գիտակցի նաեւ, որ այդ երկու վտանգներէն, իր բաժանումը աւելի կործանարար պիտի ըլլայ Թուրք ազգին համար, քան անկախութեան կորուստը՝ հողային ամբողջութեան պահպանման դէմով :

Արդ՝ եթէ Թուրքիան ենթարկուի յարձակման մը Իտալիոյ կամ անոր համախոհներու կողմէ, Թուրքիան պիտի փորձէ ինքզինքը պաշտպանել, որքան որ կ'իյնայ իր ուժերու սահմանին մէջ : Բայց կասկածէ դուրս է, որ ներկայ Թուրքիան հակառակ իր մեծախօսիկութիւններուն, կը գիտակցի թէ այդպիսի յարձակում մը պիտի վերջանայ Թուրքիոյ պարտութեամբ եւ հողային բաժանումով, որ կըրնայ աւելի հեռուններն երթալ ու յանգիլ արդիւնքի մը. այսինքն՝ ոչ միայն իր հողերու մեծ մասը կըրնայ բաժանուիլ, այլ նաեւ Թրքական անկախ պետութեան գոյութիւնն իսկ խնդրական դառնալ :

Այսպիսի պարագայի մը, կարելի է վրտահօրէն ըսել, որ նոր Թուրքիան արագ ցատկումով մը Պորհրդային կարգը պիտի ընդունի եւ դառնայ Պորհրդային Միութեան մէկ անդամը : Նոյնիսկ, կարելի է կասկածիլ, որ նման յարձակողական մը տակաւին չսկսած, հոտառու Թուրքիան կարող է բոլշեւիկեան դրօշակը բարձրացնել, ու այդպիսով հաւանական պատերազմը աւելի դժուարացնել :

Կամ ըսենք, թէ վերի հաւանականութիւն-

ները չեն իրականանար, այլ ներքին յեղափոխութիւն մը տեղի կ'ունենայ Թուրքիոյ մէջ, ու կենքի կը կոչուի բոլշեւիզմը, փաշայական այդ երկրի մէջ, որ այս վերջին տարիներուն բաւական վարժուեցաւ տարօրինակ յեղաշրջումներու : Կարեւորը այս մանրամասնութիւնները չեն, այլ այն, որ Թուրքիան կը դառնայ Պորհրդային եւ իր հողային ամբողջութեամբ կը մտնէ Ռուսաստանի սահմաններու մէջ :

Հողային ամբողջութիւնն ու Թրքական ազգային միութեան պահպանումը նոր Թուրքիոյ գերագոյն նպատակն է :

Բոլոր տեսակի ենթադրութիւններու ընդառաջ երթալով, կողմնակից ըլլանք հայ բոլշեւիկներուն եւ անոնց համախոհներուն, թէ Թուրքիան պիտի ենթարկուի բոլշեւիկեան Ռուսաստանի ազդեցութեան եւ պիտի դառնայ անոր Պորհրդային մէկ մասնիկը :

Հետաքրքիր է գիտնալ, թէ մենք հայերս ի՞նչ օգուտ պիտի ստանանք նման իրողութենէ մը :

Նախ՝ պէտք է հոս շեշտեմ այն քաղաքական կատարեալ համոզումը, թէ Ռուսաստանի հակառակ մեծ պետութիւնները, ինչպէս նաեւ Թուրքիոյ զանազան հողամասերու վրայ աչք ունեցող մեծ ու փոքր ազգերը երբեք չպիտի հանդուրժեն, որ հիւանդ Թուրքիոյ փոխարէն Մեծն Ռուսաստանը զայ ու նստի այդ ծովերու, նեղուցներու եւ լայնածաւալ հողերու վրայ, ու իր հզօրութեամբ օգը ցնդեցնէ հողային բաժանման չողջողուն ծրագիրները :

Բայց այս պնդումը ապացուցանելու փաստարկութեան չպիտի գրմեմ, նախընտրելով, որ պատմական դէպքերը գան եւ անվիճելի ապացոյցը տան, թէ Եւրոպա երբեք չպիտի հարդուրժէ, որ կարմիր հրդեհը այնքան մօտենայ իր դռներուն : Պահ մը կ'ընդառաջեմ այն ցանկութեան, որ կ'ուզէ տեսնել Պորհրդային Թուրքիա մը կանգուն, դաշնակից՝ Պորհրդային Ռուսաստանի, Պորհրդային վարչաձեւով : Միեւնոյն ժամանակ ենթադրենք, որ քաղաքական դատաւորութիւնները կարելի պիտի դարձնեն այդ իրողութեան ժամանակաւոր տեսլութիւնը :

Այդպիսի գոյավիճակի մը տեսականութիւնը, ըստ իս, պիտի նշանակէր համարու-